Զ.

ԱՐԻՍՏԱԿԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ. — 1457-60.

(Զեռնադրեալ եպիսկոպոս զԹաչատուր վարդապետ՝ առաքէ առ Լեհահայս)։

ԵՆՈՐՀԱՒՔ և ողորմութեամբ կամաւք և ընտրութեամբ ամենակալին Աստուծոյ Հաւրն երկնաւորի արարչին ամենայն արարածոց, և կարողութեամբ և զաւրութեամբ միածնի Որդւոյ Նորա Յիսուսի Քրիստոսի, և հաճութեամբ Հոգւոյն Սրբոյ Աստուծոյ ճշմարտի. Այս մեր գիր հոգևորական հրամանի, և աւրհնութեամբ ամենասուրբ Երրորդութեան և միոյ աստուածութեանն, նամակ ողջունի սիրոյ և խաղաղութեան, քրիստոսասանդ և առաքելական. Առաքեալ յընթանուր ամենայն ծագս երկրի, ի փառաւոր և յերջանիկ դիտապետէ, նոր և ընտրեալ Հայրապետէ, և գերիմաստ պատրիարգէ, Տէր Աղիստակէսն Կարողիկոսն ամենայն Հայոց, եւ Վաղարշապատու քաղաքի Հայոց Մեծաց տեղապահ և յաջորդ, աթոռակալ և փոխանորդ Սրբոց առաքելոցն Թադէոսի և Բարդողիմէոսի և Սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին. Զոր գրեմք ի դրանէ աստուածադիր սուրբ աթոռոյս երկնանման խորանէ և լուսակիր տաճարէ Կաթուղիկէ սուրբ Էջմիածնիս. ի յաստուածամուխ Գեղարդէ ներկեալ արեամբն Յիսուսի, եւ շնորհաբաշխ աջէ մեր Սուրբ Լուսաւորչին. Եւ ի կենդանաթաղ գերեզմանէ Սրբոյն Գրիգորի հրաշագործ խոր վիրապէ. Եւ ի սուրբ կուսանաց գերեզմանացս՝ Հռիփսիմեանց և Գայիանեանց, եւ յայլ բազմահաւաք սրբութեանցս՝ աստուածազարդ և մեծապայծառ սուրբ աթոռոյս Էջմիածնի։ Զոր գրեմք և առաքեմք ի յաստուածապահ մայրաքաղաքդ Լովկոյ եկեցեալ, ի Սեչովն, ի Կամենեցն, ի Սերաբն, ի Պօրիչան, Մանքերմանն, ի Պէչզան։ Որոց այդոցիկ բնակչացդ ի միասին, նախ՝ պատուական քահանայիցդ ըստ կարգի, բարեպաշտօն տանուտերացդ և խօճայնոյդ, աստուածասէր ազատորդեացդ, աշխատասէր հողագործացդ, հաւատարիմ ձեռնաւորաց, փառաւոր և մեծ խօճայնոյդ, իմաստուն վաճառականացդ, ձեռնահմուտ արուեստաւորացդ, համեստ և երկեւղած տանտիկնացդ, և համարէն ամենայն ժողովրդականացդ, արանց և կանանց, ծերոց և տղայոց, երիտասարդաց և կուսից և ամենայն չափու հասակի. որոց անուանք ձեր գրեալ են և գրին ի գիրն կենաց՝ յանմոռաց յիշատակութիւն Աստուծոյ. ամէն։

Գիտուրիւն ցիցի ձեզ ամենեցուն հոգևոր որդիք մեր ի Քրիստոս. Ողորմութեամբն Աստուծոյ և շնորհիւ մեր սուրբ Լուսաւորչին նստաք յաթոռս